

մէջ, ինչպէս վերև ցոյց տրուեցաւ: Բայց դարուս հնախօսական եւ լեզուագիտական գիտութիւնները ինչպէս տեղագրութիւնը, կը ճանչցնեն մեզ իրական կազմին կամ բեւեկին: Էլ-Արպախնի աւերակները էլ-Ռիւմէյէտէ բլուրին ստորտը գրեթէ 1200 մէթր հեռու, և որ ընդհանրապէս իրաւամբ կը ճանչցուի նախկին Քերրոնի տեղը, հիւսիսային-արեւելք կը գտնուի տեղացիներէն Nimra կոչուած գագաթը, և շատերը զայն կ'արտասանեն Mimra. բայց այս վերջին ձևը շատ քիչ տարածուած է: Նիմրան համաձայն է երբայեցեքէն Մամբրէի: Անուններ կան որոնց մ գիրը կը փոխուի նի, ինչպէս Մասփա, Նասպի, այսպէս Մակրոն փոխուած է Նիւրայի, Մ գլխագիրը եղած է Ն: Արգի գիտնականներու համաձայն, ուրեմն Մամբրէի կազմին ճիշդ տեղը Խիրպէր Նիւրան է, (տե՛ս С. S. E. յօդուած Mambre, քաղուած ուլք, էջ 145-216):

4. Քերրոն. — Քերրոնը պաղատու ծառերով զարդարուած երկու բլուրներու մէջ կը գտնուի: Տուները շինուած են սպիտակ փայլուն քարերով և պսակուած են փոքր ցած գմբէթներով և մօտը կը գտնուին այն հոյակապ մզկիթին՝ որ կը նայի ամէնուն վրայ: Այս մզկիթն է որ կը պարունակէ Մաքպելայի նշանաւոր այրը, Աբրահամի, Իսահակի և Յակոբի գերեզմանները:

Քերրոնը աշխարհի հնագոյն քաղաքներէն մին է: Սուրբ Գիրքը կը սորվեցնէ թէ ան Թանիսէն՝ ստորին Եգիպտոսի մայրաքաղաքէն եօթը տարի առաջ հիմնուած է (Թիւ. ԺԳ. 23), և Յովսեպոս կը պնդէ թէ իր ժամանակը ան 2300 տարիներէ ի վեր գոյութիւն ունէր: Սկիզբները կը կրէր իր հիմնագիրին անունը՝ Քիրիայ Արպա, Արպաի քաղաք, հայրը Ենակի (Մննդ).